

ԼԵՎՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՌՈՏԻՆՅԱՆԻ

1964 թ. դեկտեմբերի 30-ին, Երևանում, կյանքի 86-րդ տարում վախճանվեց ականավոր ֆիզիկա-քիմիկոս, Սովետական Հայաստանում բարձրագույն քիմիական կրթության հիմնադիրներից մեկը, Հայկական ՍՍՐ Գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Ալեքսանդրի Ռոտինյանը:



1903 թ. Ս. Պետերբուրգի համալսարանի քիմիական ֆակուլտետի ֆիզիկա-մաթեմատիկական բաժանմունքն ավարտելուց հետո Ռոտինյանցին հրավիրվում են Ս. Պետերբուրգի հենց նոր բացված Պոլիտեխնիկական ինստիտուտ՝ ֆիզիկական քիմիայի ամբիոնի ասիստենտի պաշտոնին:

Այդ ինստիտուտում Վ. Ա. Կիստակովսկին կազմակերպել էր ֆիզիկական քիմիայի լաբորատորիա, որտեղ Ռուսաստանում առաջին անգամ կազմակերպվել էին ուսանողների համար գործնական աշխատանքներ: Գործի նորություն պատճառով հսկայական ջանքեր պահանջած այդ զարգացմունքները կազմակերպելու գործին Ռոտինյանցը ամենակատիվ մասնակցություն ունեցավ՝ Ֆ. Է. Դրեյբերի հետ միասին նա զրեց ֆիզիկական քիմիայի գործնական պարամունքների ուսերեն լեզվով առաջին ձեռնարկը, որի մեջ զգալի ուշադրություն էր դարձված ուս գիտականների ստեղծած էքսպերիմենտների մեթոդներին (հեղուկների փոխադարձ լուծվելիության որոշումն ըստ Ալեքսեևի, մազանոթային բարձրացման կրիտիկական ջերմաստիճանի որոշումն ըստ Կիստակովսկու, ռեակցիաների արագությունների որոշումն ըստ Մենշուտկինի):

Պոլիտեխնիկական ինստիտուտում աշխատած տարիներին Ռոտինյանցի գիտական հետաքրքրության օբեկտը հիմնականում հանդիսանում է անհատա-

կան միացութիւնների և բարդ սիստեմաների ֆիզիկա-քիմիական ուսումնասիրութիւնը: Ֆ. Ֆ. Ռոտարսկու հետ միասին կատարած իր առաջին աշխատութեամբ նա մանրամասն ուսումնասիրեց սպօքսիանիզոլ-սպօքսիֆենետոլ սիստեմը և ցույց տվեց, որ հակառակ խոշոր գիտնականներ՝ Լ. Գատերմանի և Ռ. Շենկի կարծիքին, տվյալ սիստեմը հանդիսանում է երկու նյութերի խառնուրդ, և ոչ քիմիապես անհատական միացութիւն:

Լալն ճանաչում գտաւ հալված ծծումբի մածուցիկութեան վերաբերյալ Ռոտինյանցի հետազոտութիւնը որի մեջ առաջին անգամ հաստատված էր, որ հեղուկ ծծումբի մածուցիկութեան մաքսիմումը և՛ իր մեծութեամբ, և՛ իր ջերմաստիճանով կախված է տաքացման և, առանձնապէս, ստեղծելու արագութիւնից, ինչպէս և ալն ջերմաստիճանից, մինչև որը նախապէս տաքացվել էր ծծումբը: Ծծումբի այդպիսի «անոմալ» վարքը Վ. Օստվալդի համար հանդիսացավ նախադրւոյններից մեկը՝ կառուցվածքային մածուցիկութեան տեսութիւնն ստեղծելիս:

Ոչ պակաս չափով հալանի են Վ. Ա. Սուխոդսկու հետ համատեղ Ռոտինյանցի կատարած սնդիկի, ալումինի և անտիմոնի հալոգենային աղերի կրիտիկական ջերմաստիճանները որոշելու վերաբերյալ աշխատանքները, որոնցում առաջին անգամ և մեծ ճշտութեամբ որոշված էին միացութիւնների կրիտիկական ալնքան բարձր ջերմաստիճանները, որոնք ալն ժամանակ համարվում էին անհասանելի՝ կրիտիկական վիճակն ուսումնասիրելիս: Ստացված տվյալները լրիվ հաստատեցին ալլ հետազոտողներ և մինչև այժմ բերվում են համաշխարհային բոլոր տեղեկատուներում:

Երկու աշխատանք նվիրված է սնդիկի գոլորշիների առաձգականութեան և անտիմոնի հալոգենային միացութիւնների որոշմանը: Նրանցից առաջինում բերված է տվյալների սիստեմատիկ մշակումը ամենացածր ջերմաստիճանից մինչև 1000°C , կազմված է գոլորշու առաձգականութեան ինտերպրետացիոն աղյուսակ, հաշված են սնդիկի կրիտիկական հաստատունները և առաջին անգամ նշված է, որ հալանի բոլոր նյութերից սնդիկն ամենից լավ է ենթարկվում Վան-դեր-Վաալսի հավասարմանը: Ավելի ուշ նույնպիսի եզրակացութեան հանգեց նաև Վան-Լաարը:

Հիշատակութեան արժանի է նաև հեղուկների գոլորշիացման թափնված ջերմութիւնը արագ և բավականաչափ ճշգրիտ որոշելու համար առաջարկված նոր պարզ և հաշող սարքի նկարագրութիւնը պարունակող աշխատութիւնը:

1918—1920 թթ. Ռոտինյանցը դասավանդել է քիմիա Թիֆլիսի համալսարանում, իսկ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո փոխադրվում է Հայաստան, աշխատելով նախ Ալավերդու պղնձաձուլական գործարանում որպէս կենտրոնական լաբորատորիայի ղեկավար, իսկ 1923—1930 թթ. Երևանի Պետական համալսարանում, Հոգեփոխմաստի և Ժողատնխորհի կենտրոնական միացյալ լաբորատորիայում որպէս անօրգանական բաժնի վարչ, իսկ 1930—1938 թթ. — Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում: Այդ շրջանում Ռոտինյանցը, շատ մեծ աշխատանք է կատարել Երևանում ընդհանուր, անալիտիկ և ֆիզիկական քիմիայի առաջին ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաները և այդ առարկաների գասսովանդումը բուհերում կազմակերպելու, երիտասարդ գիտնական քիմիկոսների կադրեր ստեղծելու և համախմբելու, ինչպէս և Ռեսպուբլիկայում առաջին քիմիական

արդյունարերական օջախներ ստեղծելուն անհրաժեշտ օգնություն ցույց տալու ուղղությամբ:

Այդ շրջանում Ն. Ն. Նազոբնովի հետ միասին Ռոտինյանցը հրապարակել է ցիկլոնիքսանի ածանցյալների ֆիզիկական հատկությունների և ցիկլոնիքսանի մակերեսային միճակի մասին ֆունդամենտալ հետազոտություններ, Վերջին աշխատությունը կարելի է դասել իր ժամանակի համաշխարհային գիտության նմանօրինակ լավագույն հետազոտությունների դասը:

Հայաստանի բաղադրյալ քարատեսակների անսպառ պաշարները կյանքի կոչեցին քարերի ձուլման արդյունաբերություն ստեղծելու փորձերը: Գործնական պահանջմունքների կապակցությամբ Ռոտինյանցն իր աշակերտների՝ Մ. Գ. Մանվելյանի, Ֆ. Ս. Վանդրովսկու, Ֆ. Գ. Հարությունյանի, Ա. Վ. Աբրահամյանի և ուրիշների հետ միասին կատարել է ընդարձակ հետազոտություններ հալված րադալտների բյուրեղացման պայմանները որոշելու ուղղությամբ, որոնք հնարավորություն ավելցին հաղթահարելու այդ գործում դրսևորված դժվարությունները:

Ռոտինյանցը կատարել է մի շարք այլ հետազոտություններ, որոնք նպաստել են Հայաստանում ցեմենտի, պղնձի, կարբիդի և ցիանամիդի արդյունաբերության ստեղծելուն ու զարգացնելուն:

Ռոտինյանցն ակտիվ մասնակցություն է ունեցել 1935 թ. ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի քիմիական ինստիտուտի կազմակերպման գործում և ղեկավարել է այդ ինստիտուտի ֆիզիկա-քիմիական սեկտորը: Անհատի պաշտամունքի շրջանի իրադարձությունները Ռոտինյանցին մի քանի տարով զրկեցին ստեղծագործական բեղմնավոր աշխատանքից, որին նա ձեռնամուխ եղավ նորից 1943 թ. նախ Կիրովականի քիմիական կոմբինատում, ապա Կիրովաբադի և Ջերովսարիի գյուղատնտեսական ինստիտուտներում, իսկ 1957 թ.՝ Հայկական ՍՍՌ ԺՏՖ Գիմիալի գիտահետազոտական ինստիտուտում, գլխավորելով ֆիզիկական քիմիայի բաժինը: Այստեղ Ռոտինյանցը կատարել է երկու խումբ հետազոտություններ՝ հետերոգեն հալասարակշռությունների տեսության բնագավառից (բաշխման օրենքի քննարկումը թերմոդինամիկայի տեսակետից) և բաշխման օրենքի կիրառությունը եռակի հեղուկ սիստեմի լուծելիություն իզոթերմիկ դիագրամի ուսումնասիրության համար, որոնցում օրիգինալ կերպով դուրս են բերված բաշխման օրենքը և այն հավասարումները, որոնք իրար են կապում մի ֆազում լուծված նյութի կոնցենտրացիաները, կոնիդենտների երկարությունները և այն անկյունները, որոնք գույացնում են կոնիդենտը կոնցենտրացիոն եռանկյան կողմերով: Հետազոտությունների մյուս խումբը նվիրված է կրկնակի կոպիտ-դիսպերս (փոշի) սիստեմների կազմ-հատկություն դիագրամների ուսումնասիրությանը, որը, դժբախտաբար, մնացել է չավարտված: Ռոտինյանցի գրչին է պատկանում շուրջ երեք տասնյակ տպագրված աշխատություն:

Իր գիտական, մանկավարժական և հասարակական գործունեության վեց տասնամյակների ընթացքում Լևոն Ալեքսանդրի Ռոտինյանցը խոշոր և շնորհակալ գործ է կատարել Սովետական կառավարությունը բարձր է գնահատել նրա գործունեությունը: պարգևատրելով նրան Հայաստանի Գնատրոնական գործադիր կոմիտեի պատվոգրով, շնորհելով նրան Հայկական ՍՍՌ Գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Նրա հիշատակը կապրի բոլոր նրան ճանաչողների սրտերում: